Հաղորդակցման մատրիցա

Հաղորդակցման հմտության գնահատում

- Հաղորդակցման վաղ փուլերում գտնվող անձանց համար
- Հաղորդակցման նախասիմվոլային կամ այլընտրանքային տարբերակ կիրառող անձանց համար

Հասանելի է ծնողների համար նախատեսված անգլերեն տարբերակը

ՉԵՐԻԹԻ ՌՈՈՒԼԱՆԴ, գիտ. դոկտոր
©1990, 1996, 2004

Թարգմանեց՝
լոգոպեդ, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ
ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՎԱԳՅԱՆ
2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաղորդակցման մատրիցան ներառում է հաղորդակցման չորս նպատակների և յոթ մակարդակների գնահատումը:
Մատրիցան օգնում է **գնահատել** երեխայի հաղորդակցման այս պահի մակարդակը, **պլանավորել** հաղորդակցման զարգացմանն ուղղված գործողությունները և **թիրախավորել** հաղորդակցման՝ ձևավորման ենթակա նպատակները: Մատրիցան կօգնի հետազոտել հաղորդակցման լուրջ դժվարություններ ունեցող, բարդ և բազմակի (այդ թվում զգայական, շարժողական, մտավոր) խանգարումներ ունեցող երեխաների հաղորդակցումը:
Մատրիցան կարող է օգտագործվել նաև.

- մեծահասակների հաղորդակցման հետազոտման համար, եթե նրանց հաղորդակցման մակարդակը համապատասխանում է վերջինիս զարգացման վաղ փուլերին:
- Հաղորդակցման զարգացման հապաղման նշաններ ունեցող փոքրիկների հետազոտման համար:

Մատրիցան բաղկացած է բուն մատրիցայից ու հաղորդակցման պրոֆիլից: Մատիցան պարունակում է հաղորդակցման հիմնական չորս նպատակների գնահատումը: Դրանցից յուրաքանչյուրը ներառում է հարցեր, որոնց դուք պատասխանելու եք մատրիցան լրացնելիս: Լրացնելով այն դուք լիարժեք և ստույգ պատկերացում կկազմեք երեխայի հաղորդակցման վիճակի վերաբերյալ: Հաղորդակցման պրոֆիլը կկարողանաք լրացնել մատրիցան լրացնելուց հետո:
Մատրիցայի 5-11-րդ էջերը լրացնելուց հետո կկարողանաք լրացնել հաղորդակցման պրոֆիլը:

Հաղորդակցման հիմնական նպատակները

Հաղորդակցումը ծառայում է հետևյալ չորս նպատակներին՝ մերժում, ստացում, սոցիալական փոխազդեցություն, տեղեկատվության փոխանցում/ստացում:

1. Անցանկալի բաների մերժում

Նույնիսկ նորածինը կարող է հասկացնել, թե ինչը իրեն դուր չի գալիս՝ սոված է, ցավ ունի, անհարմարություն է զգում: Մեծանալով, մենք անցանկալին արտահայտելու ավելի ընկալելի ձևեր ենք գտնում:

2. Ցանկալիի ստացում

Երբ մի բան մեզ դուր է գալիս, մենք ցանկանում ենք այն ստանալ կամ դրանից էլի ստանալ: Նորածինները կարող են ցույց տալ, որ տեղի ունեցողն իրենց հաճելի է: Ավելի ուշ երեխան սովորում է, թե ինչպես պետք է մարդկանց հասկացնի իր ուզածը, եթե նույնիսկ դա դեռ չի առաջարկվել:

3. Ներգրավում սոցիալական փոխազդեցություններում

Մարդկանց մեծ մասի համար սոցիալական շփումները չափազանց կարևոր են: Նորածինները ուշադրություն գրավելու ձևերը շատ արագ սովորում են: Հետզհետե նրանք սովորում են ուշադրություն գրավելու առավել քաղաքավարի ու սոցիալապես ընդունելի ձևերը:

4. Տեղեկատվության փոխանցում/ստացում

Մեծանալուն զուգահեռ երեխաները սկսում են հետաքրքրվել իրենց շրջապատով, սովորում են ինֆորմացիա հայցել, հարցեր տալ, ինֆորմացիա փոխանցել: Սովորաբար նրանց պատասխանը սահմանափակվում է «այո» և «ոչ» արտահայտելով, հարցերը լինում են պարզ, մեկնաբանությունները՝ նույնպես:

Հաղորդակցական վարքագիծ

Հաղորդակցման վաղ շրջանում երեխան կիրառում է ձայնարձակումներ, շարժումներ, ժեստեր, դիմախաղ, աչքի կոնտակտ: Զարգացմանը զուգընթաց արտահայտվելու ձևերը կատարելագործվում են, դառնալով առավել ընդունելի ու հասկանալի: Երեխան սկսում է կիրառել սիմվոլներ, բառեր, ժեստեր, հաղորդակցման ցածր, միջին և բարձր տեխնոլոգիական միջոցներ:

Տվյալների հավաքում

Օգտագործեք դիտարկումները, ծնողների հետ հանդիպումների ժամանակ ձեռք բերած ինֆորմացիան՝ պարզելու համար, թե ինչ վարքագիծ է երեխան դրսևորում արտահայտելու համար վիճակը (I մակարդակ), ֆունկցիաները (II մակարդակ) կամ մտադրությունները (III-VII մակարդակներ):

Գնահատումը

Տվեք այն հարցերը, որոնք գրված են «Հարցրեք» սյունակում: Եթե պատասխանն «այո» է, շրջանի մեջ վերցրեք այն տառը, որը համապատասխանում է վարքագծին ու նշված է «Պատասխանեք այստեղ» սյունակում: Ստուգեք այն վարքագծերը, որոնք երեխան դրսևորում է **ինքնուրույն և հերևողականորեն:**

Հարցերի մեծ մասի դեպքում Դուք կարող եք գտնել հաղորդակցման տարբեր մակարդակներին համապատասխանող պատասխաններ: Երեխաների մեծ մասին բնորոշ է հաղորդակցման տարբեր մակարդակների դրսևորումներ ունենալը: Օրինակ՝ երեխան կարող է ցանկալի առարկա ստանալու համար արտասանել բառը՝ «ձողիկ» (VI մակարդակ), Ձեզ փոխանցել ցանկալի առարկայի նկարը (V մակարդակ) և մատնացույց անել տվյալ առարկան (IV մակարդակ):

Յուրաքանչյուր հատվածում կարդացեք բոլոր հարցերը վերից վար: Եթե երեխայի հաղորդակցման մակարդակը բարձր է, դուք կարող եք բաց թողնել նախորդ մակարդակներում նշումներ կատարելն ու միանգամից անցնել առավել բարձր մակարդակներին:

ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՅՈԹ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

I մակարդակ՝ մտադրություն չարտահայտող վարքագիծ

Ռեֆլեքսիվ կամ չկանխամտածված վարքագիծ, որը արտահայտում է վիճակ (քաղցը, տակը թաց լինելը): Վիճակը մեկնաբանվում/ ընկալվում է խնամակալի կողմից:

II մակարդակ՝ մտադրություն արտահայտող վարքագիծ

Վարքագիծի մեջ արտացոլվում է մտադրություն: Երեխան դեռ չի գիտակցում, որ այդ վարքագիծը կարող է օգտագործվել ուրիշի վարքագծի վրա ազդելու համար: Այնուամենայնիվ, վարքագիծը կատարում է հաղորդակցական գործառույթ, ուղղված է խնամակալին, ով կարող է ենթադրություններ անելով արձագանքել: Այս մակարդակում, նախքան հաղորդակցական վարքագիծ դրսևորելը, երեխաները չեն հաստատում աչքի կոնտակտ, չեն սպասում մեծահասակների արձագանքին: Երեխաները ոչ թե դիմացինի ուշադրությունը գրավելու ուղղակի փորձեր են անում, այլ փորձում են ուղիղ ազդեցություն ունենալ առարկաների վրա:

III մակարդակ՝ ոչ սովորական / ոչ ավանդական հաղորդակցում՝ նախասիմվոլային վարքագծով

Սա կարևոր փուլ է: Երեխայի հաղորդակցական վարքագիծը պարունակում է մտադրություն, բայց եղանակը, որով նա հաղորդակցման փորձեր է կատարում սովորական/ավանդական չէ: Երեխան ձայներ է արձակում, մարմնով շարժումներ է կատարում: Ոչ սովորական ժեստերը օգտագործվում են խնամակալի վարքագծի վրա ազդելու մտադրությամբ: Վարքագիծը կոչվում է ոչ սովորական/ոչ ավանդական, քանի որ դրանք մեծահասակների համար չեն հանդիսանում ընդունված միջոց: Չնայած այս վարքագիծը չափազանց արդյունավետ է, այն սովորաբար փոխարինվում է ավելի սովորական/ավանդական միջոցներով, օրինակ՝ ժեստերով, ձայնարձակումներով:

IV մակարդակ՝ սովորական/ ավանդական հաղորդակցում

Խնամակալի վարքի վրա ազդելու մտադրությամբ երեխան օգտագործում է սոցիալապես ընդունելի ժեստեր ու ձայնարձակումներ: Ընդունված ժեստերը մարդուն ուղեկցում են ողջ հետագա կյանքում՝ հանդիսանալով հաղորդակցման լրացուցիչ միջոց: Երեխան ցույցաբերում է «կրկնակի կողմնորոշում»՝ ինչ-որ մեկին նայելով ինչ-որ բան է «ասում»: Կոչվում է «կրկնակի կողմնորոշում», քանի որ երկու միջոց համադրվում է՝ հայացք և ժեստ:

V մակարդակ՝ որոշակի սիմվոլներ

Այս մակարդակում երեխան ունակ է կիրառելու կոնկրետ սիմվոլներ, կոնկրետ ասելիք հասկացնելու համար: Դրանցից են ժեստերը՝ տուր, արի, իրական առարկաները մատնացույց անելը: Այդ կոնկրետ սիմվոլները շրջապատի առարկաների հետ երկկողմանի կապ ունեն. նախ դրանք առարկայի հստակ խորհրդանիշն են, հետո ասոցացվում են տվյալ առարկայի հետ՝ տեսքով, արձակած ձայնով: Այս փուլը կարող են բաց թողնել բնականոն զարգացող երեխաները, սակայն հաղորդակցման ծանր խնդիրների դեպքում այն կարող է երեխային ուղեկցել ողջ կյանքում՝ երբեմն մնալով որպես հաղորդակցման միակ տարբերակ:

VI մակարդակ՝ աբստրակտ սիմվոլներ, որոնք խորհրդանշում են կոնկրետ առարկաներ

Այս մակարդակում երեխան կիրառում է աբստրակտ սիմվոլներ, որոնց վերաբերվում է նաև խոսքը, մատնախոսությունը, Բրայլյան գիրը, գրավոր խոսքը, գրաֆիկական սիմվոլները, եռաչափ սիմվոլները: Այս փուլում երեխան սիմվոլներն օգտագործում է առանձին-առանձին, առանց դրանք համադրելու: Այլընտրանքային հաղորդակցման միջոցներից օգտվող երեխան նույնն անում է իր սարքով կամ հաղորդակցման գրքով:

VII մակարդակ՝ սիմվոլների համադրում

Այս մակարդակում երեխան համադրում է 2-3 սիմվոլ (ներառյալ բառ)՝ պահպանելով լեզվի շարահյուսությունն ու քերականական կանոնները: Հաղորդակցման ծանր խանգարումների ժամանակ երեխան կարող է այս նպատակով օգտագործել ցածր, միջին և բարձր տեխնոլոգիական միջոց:

ԱՆՑԱՆԿԱԼԻՆ ՄԵՐԺԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐ

Հարցրեք	Պատասխանեք այստեղ	Հաղորդակցման վարքագիծ	Մակարդակ
1. Անհարմարության արտահայտում Կարող եք ասել, թե ե՞րբ է Ձեր երեխան դժգոհ, զգում անհարմարություն (ցավ, սով, թաց է): ☐ Ոչ ☐ Այո Եթե այո, ապա երեխայի ո՞ր գործողություններն են Ձեզ փոխանցում իր՝ անհարմարության զգացում ունենալը:	1 ա բ գ դ ե զ	ա) Փոխում է դիրքը (ձգվում է, թուլանում է): բ) Շարժում է վերջույթները (հարվածում է ոտքով, ձեռքով): գ) Շարժում է գլուխը : դ) Փոխում է դեմքի արտահայտությունը: ե) Ձայներ է արձակում (ճչում է): զ) Այլ վարքագիծ_____	**I. Մտադրություն չարտահայտող վարքագիծ** Ռեֆլեքսիվ կամ չկանխամտածված վարքագիծ, որը արտահայտում է վիճակ (քաղցը, տակը թաց լինելը): Վիճակը մեկնաբանվում/ ընկալվում է խնամակալի կողմից:
2. Բողոք Կարող եք ասել, թե ե՞րբ Ձեր երեխան որևէ կոնկրետ բան չի ուզում, օրինակ՝ կոնկրետ ուտելիք կամ խաղալիք: ☐ Ոչ ☐ Այո Եթե այո, ապա երեխայի ո՞ր գործողություններն են Ձեզ փոխանցում իր՝ ինչ-որ բան չուզելը:	2 ա բ գ դ ե զ է	ա) Շարժում է գլուխը (շրջում է այլ կողմ, հետ է գցում): բ) Ձեռքերն է շարժում (հրում է մի կողմ, նետում է): գ) Ոտքերն է շարժում (խփում է հատակին, քացի է անում): դ) Դեմքն է ծամածռում: ե) Ձայներ է արձակում (նվնվում է, ճչում է): զ) Հեռանում է առարկայից: է) Այլ վարքագիծ _____	**II. Մտադրություն արտահայտող վարքագիծ** Վարքագծի մեջ արտացոլվում է մտադրություն, սակայն չի ծառայում հաղորդակցմանը: Վարքագիծը ուղղված է խնամակալին, ով ենթադրություն ունի մտադրության վերաբերյալ:
3. Մերժում Ձեր երեխան կարող է մտադրված ցուցադրել, որ չի ցանկանում իրեն առաջարկածը կամ ինչ-որ բան անել: ☐ Ոչ ☐ Այո Եթե այո, ապա երեխայի ո՞ր գործողություններն են Ձեզ փոխանցում մերժումը:	3 ա բ գ դ ե զ է ը	ա) Մարմինը շարժում է (թափահարում, շրջում): բ) Գլուխը շրջում է այլ կողմ: գ) Ձեռքերը շարժում է: դ) Ոտքերն է շարժում (խփում է հատակին, քացի է անում): ե) Դեմքն է ծամածռում: զ) Ձայներ է արձակում (նվնվում է, ճչում է) է) Հեռանում է առարկայից: ը) Այլ մտադրություն պարունակող վարքագիծ _____	**III. Ոչ սովորական հաղորդակցում** Ոչ սովորական ժեստերը օգտագործվում են խնամակալի վարքագծի վրա ազդելու մտադրությամբ:
	ա բ գ դ	ա) Անցանկալի առարկան վերադարձնում է ձեզ: բ) Գլխով «ասում է»՝ ոչ: գ) Դժգոհություն արտահայտող ձայն է արձակում: դ) Այլ մտադրություն պարունակող ժեստ է անում _____	**IV. Սովորական/ընդունված հաղորդակցում** Ժեստերը կիրառվում են խնամակալի վարքի վրա ազդելու մտադրությամբ: Երեխան դրսևորում է «կրկնակի կողմնորոշում»:
	ա բ գ	ա) Մերժում է անցանկալի առարկայի նկարը կամ լուսանկարը: բ) Մերժում է անցանկալի առարկայի սիմվոլը: գ) Մերժում է ասոցիացիա առաջացնող իրերը _____	**V. Կոնկրետ սիմվոլներ** Որոշակի բաներ խորհրդանշող կոնկրետ սիմվոլների սահմանափակ կիրառություն և ցանկալի առարկային համապատասխանող սիմվոլի ճշգրիտ ընտրություն:
	ա բ գ դ ե զ	ա) Խոսքով ասում է «ոչ», «վերջ»: բ) Ժեստով «ասում է» «ոչ», «վերջ»: գ) Գրում է «ոչ», «վերջ»: դ) Բրայլով գրում է «ոչ», «վերջ»: ե) Ցույց է տալիս «ոչ», կամ «վերջ» բառերի սիմվոլը: զ) Այլ վերացական սիմվոլ է օգտագործում _____	**VI. Վերացական սիմվոլներ** Վերացական սիմվոլների սահմանափակ կիրառում առարկան նշելու համար: Սիմվոլները կիրառվում են մեկ առ մեկ:
	ա բ	ա) Կիրառում է 2 սիմվոլի համադրություն «Չեմ ուզում», «Դադարեցրու դա»: բ) Կիրառում է 3 սիմվոլի համադրություն «Չեմ ուզում ուտեմ», «Մի գնա դուրս»: Սիմվոլների տեսակը _____	**VII. Լեզու** Նշանային համակարգի կիրառում ըստ կանոնների: 2-3 սիմվոլների համադրություն ճիշտ շարադասությամբ:

ՅԱՆԿԱԼԻՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՈՒՂԻՆԵՐ...

Հարցրեք	Պատասխանեք այստեղ	Հաղորդակցման վարքագիծ	Մակարդակ
1. Հարմարավետության արտահայտում Կարող եք ասել, թե ե՞րբ է Ձեր երեխան գոհ, իրեն հարմարավետ զգում կամ ոգևորված է: ☐ Ոչ ☐ Այո Եթե այո, ապա երեխայի որ գործողություններն են Ձեզ փոխանցում իր՝ հարմարավետության զգացում ունենալը:	1 ա բ գ դ ե զ	ա) Փոխում է դիրքը (ձգվում է, թուլանում է): բ) Շարժում է վերջույթները (հարվածում է ոտքով, ձեռքով): գ) Շարժում է գլուխը: դ) Փոխում է դեմքի արտահայտությունը (ժպտում է): ե) Ձայներ է արձակում (ճչում է): զ) Այլ վարքագիծ _____	**I. Մտադրություն չարտահայտող վարքագիծ** Մինչկանխամտածված կամ ռեֆլեքսիվ վարքագիծ, որը արտահայտում է վիճակ (քաղցը, տակը թաց լինելը): Վիճակը մեկնաբանվում/ընկալվում է խնամակալի կողմից:
2. Շարունակում է գործողությունը Կարողանում եք երբեմն կռահել, որ Ձեր երեխան կցանկանար շարունակել այդ պահին դադարեցված գործողությունը կամ զբաղմունքը (ցատկոտելը, երաժշտական գործիք նվագելը): ☐ **Ոչ** ☐ **Այո** Եթե այո, ապա երեխայի որ գործողություններն են Ձեզ օգնում կռահել, որ նա ցանկանում է շարունակել գործողությունը: **3. Կրկին ստանում է որևէ առարկա** Կարող եք երբեմն կռահել, որ Ձեր երեխան ինչ-որ կոնկրետ բան կրկին/մի քիչ էլ է ուզում (օրինակ՝ ուտելիք խաղալիք): ☐ **Ոչ** ☐ **Այո** Եթե այո, ապա երեխայի որ գործողություններն են Ձեզ օգնում կռահել, որ նա ինչ-որ կոնկրետ բան կրկին/մի քիչ էլ է ուզում:	2 3 ա ա բ բ գ գ դ դ ե ե զ զ է է ը ը թ թ	ա) Ձգվում է դեպի ցանկալի առարկան: բ) Շարժում է գլուխը (առաջ է բերում, ճոճում է): գ) Շարժում է ձեռքերը (հարվածում է ձեռքերով): դ) Շարժում է ոտքերը (հարվածում է ոտքերով): ե) Փոխում է դեմքի արտահայտությունը (ժպտում է): զ) Ձայներ է արձակում (գոգոցում է): է) Նայում է ցանկալի առարկային կամ անձին: ը) Վերցնում է ցանկալի առարկան: թ) Այլ վարքագիծ _____	**II. Մտադրություն արտահայտող վարքագիծ** Վարքագիծի մեջ արտացոլվում է մտադրություն, սակայն չի ծառայում հաղորդակցմանը: Վարքագիծը ուղղված է խնամակալին, ով ենթադրություն ունի մտադրության վերաբերյալ:
4. Կրկին ուզում է որևէ գործողություն կատարել Ձեր երեխան կարողանում է **մտադրված** արտահայտել/ցուցադրել/հասկացնել, որ ցանկանում է կրկնել դադարեցված գործողությունը (օր. խաղալ «Ծիկ», կամ լարել ձայն արձակող խաղալիքը): ☐ **Ոչ** ☐ **Այո** Եթե այո, ապա երեխայի որ գործողություններն են Ձեզ օգնում կռահել, որ նա ցանկանում է կրկնել դադարեցված գործողությունը: **5. Ցանկանում է նոր գործողություն** Ձեր երեխան կարողանում է **մտադրված** արտահայտել/ցուցադրել/հասկացնել նոր գործողություն կատարելու ցանկությունը: ☐ **Ոչ** ☐ **Այո** Եթե այո, ապա ինչպես է նա պահանջում նոր գործողության կատարումը: **6. Կրկին ուզում է որոշակի առարկա** Ձեր երեխան կարողանում է **մտադրված** արտահայտել/ցուցադրել/հասկացնել որոշակի բան էլի/ավելի շատ ունենալու ցանկությունը: ☐ **Ոչ** ☐ **Այո** Եթե այո, ապա ինչպես է նա արտահայտում իր ցանկությունը: **7. Ընտրություն է կատարում** Ձեր երեխան կարողանում է **մտադրված** արտահայտել/ցուցադրել/հասկացնել Ձեր կողմից առաջարկվող երկու կամ ավելի առարկաների միջից որոշակին ընտրելու ցանկությունը, (համոզվեք, որ նա ծանոթ է բոլոր առարկաներին ոչ թե ընտրում է առաջին պատահածը): ☐ **Ոչ** ☐ **Այո** Եթե այո, ապա ինչպես է նա արտահայտում ցանկությունը: **8. Խնդրում է նոր առարկա** Ձեր երեխան կարողանում է **մտադրված** արտահայտել/ցուցադրել/հասկացնել նոր առարկա ունենալու/ձեռք բերելու ցանկությունը (օր. խաղալիք կամ ուտելիք), որն իր տեսադաշտում է, բայց իրեն չի առաջարկվել: ☐ **Ոչ** ☐ **Այո** Եթե այո, ապա ինչպես է նա արտահայտում իր ցանկությունը:	4 5 6 7 8 ա ա ա ա ա բ բ բ բ բ գ գ գ գ գ դ դ դ դ դ ե ե ե ե ե զ զ զ զ զ է է է է է ը ը ը ը ը թ թ թ թ թ ժ ժ ժ ժ ժ ի ի ի ի ի լ լ լ լ լ	ա) Շարժում է ամբողջ մարմինը (ձգվում է, թափահարում է): բ) Գլուխը ձգում է դեպի ցանկալի առարկան: գ) Շարժում է ձեռքերը: դ) Շարժում է ոտքերը: ե) Ձայներ է արձակում (գոգոցում է, ծիծաղում է): զ) Փոխում է դեմքի արտահայտությունը (ժպտում է): է) Նայում է ձեզ կամ ցանկալի առարկային: ը) Ձեզ կամ Ձեր ձեռքը ուղղում է դեպի ցանկալի առարկան: թ) Դիպչում է ցանկալի առարկային կամ անձին՝առանց այն վերցնելու: ժ) Ձեռքով հասնում է կամ դիպչում է ցանկալի առարկային կամ անձին: ի) Բռնում է Ձեր ձեռքը: լ) Այլ՝ ոչ սովորական ժեստ _____	**III. Ոչ սովորական հաղորդակցում** Ոչ սովորական ժեստերը օգտագործվում են խնամակալի վարքագծի վրա ազդելու մտադրությամբ:

9. խնդրում է բացակայող առարկան
Ձեր երեխան կարողանո՞ւմ է մտադրված արտահայտել/ցուցադրել/հասկացնել բացակայող, տեսադաշտից դուրս ինչ-որ բան (խաղալիք, ուտելիք, հարազատ) ունենալու ցանկությունը:

☐ **Ոչ** ☐ **Այո**
Եթե այո, ապա ինչպե՞ս է նա երեխան արտահայտում ցանկությունը:

4	5	6	7	8			
ա	ա	ա	ա	ա		ա) Նայում է ձեզ, ապա ցանկալի առարկային:	**IV. Սովորական/ընդունված հաղորդակցում** Ժեստերը կիրառվում են խնամակալի վարքի վրա ազդելու մտադրությամբ: Երեխան ցույց է տալիս «կրկնակի կողմնորոշում»:
բ	բ	բ	բ	բ		բ) Ինչ-որ բան Ձեզ ցույց տալիս կամ փոխանցում:	
գ	գ	գ	գ	գ		գ) Կանչում է ձեզ:	
դ	դ	դ	դ	դ		դ) Ձեռքերը առաջ է պարզում:	
ե	ե	ե	ե	ե		ե) Ձեռքերը վերև է պարզում:	
զ	զ	զ	զ	զ		զ) Մատով ցույց է տալիս ցանկալի առական:	
է	է	է	է	է		է) Գլուխով համապատասխան շարժում է անում, երբ համաձայն է կամ համաձայն չէ:	
ը	ը	ը	ը	ը		ը) Բարձրացնում կամ թափահարում է ձեռքը (ուշադրությունը գրավելու համար):	
թ	թ	թ	թ	թ		թ) Յուրահատուկ ձայնարկություններ է անում:	
ժ	ժ	ժ	ժ	ժ		ժ) Ոչ սովորական ժեստ _____	
					9		
ա	ա	ա	ա	ա	ա	ա) Ցույց է տալիս ցանկալի առարկայի/անձի/գործողության նկարը:	**V. Կոնկրետ սիմվոլներ** Որոշակի բաներ խորհրդանշող կոնկրետ սիմվոլների սահմանափակ կիրառություն և ցանկալի առարկային համապատասխանող սիմվոլի ճշգրիտ ընտրություն:
բ	բ	բ	բ	բ	բ	բ) Ցույց է տալիս ցանկալի առարկայի/անձի/գործողության սիմվոլը:	
գ	գ	գ	գ	գ	գ	գ) Շարժումներով ցույց է տալիս գործողություն կամ առարկա:	
դ	դ	դ	դ	դ	դ	դ) Նմանակում է ցանկալի առարկայի կամ գործողության ձայնը:	
ե	ե	ե	ե	ե	ե	ե) Այլ կոնկրետ սիմվոլ _____	
ա	ա	ա	ա	ա	ա	ա) Բառի արտասանություն («էլի», «գնդակ»):	**VI. Վերացական սիմվոլներ** Վերացական սիմվոլների սահմանափակ կիրառում առարկան նշելու համար: Սիմվոլները կիրառվում են մեկ առ մեկ:
բ	բ	բ	բ	բ	բ	բ) Ժեստ («էլի», «գնդակ»):	
գ	գ	գ	գ	գ	գ	գ) Գրավոր խոսք («էլի», «գնդակ»:	
դ	դ	դ	դ	դ	դ	դ) Բրայլյան գիր («էլի», «գնդակ»):	
ե	ե	ե	ե	ե	ե	ե) Վերացական եռաչափ սիմվոլ («էլի», «գնդակ»):	
զ	զ	զ	զ	զ	զ	զ) Վերացական ընդունված սիմվոլ («էլի», «գնդակ»):	
է	է	է	է	է	է	է) Այլ վերացական սիմ-վոլներ_____	
ա	ա	ա	ա	ա	ա	ա) Երկու սիմվոլ («էլի հյութ», «տուր գնդակ»):	**VII. Լեզու** Նշանային համակարգի կիրառում ըստ կանոնների: 2-3 սիմվոլների համադրություն ճիշտ շարադասությամբ:
բ	բ	բ	բ	բ	բ	բ) Երեք սիմվոլ («էլի արա դա», «ուզում եմ գնդակ») սիմվոլի տե-սակ----------	

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԵԼՈՒ ՁԵՎԵՐԸ

Հարցրեք	Պատասխանեք այստեղ	Հաղորդակցման վարք	Մակարդակ
1. Արտահայտում է հետաքրքրությունն այլ անձանց նկատմամբ Կարո՞ղ եք ասել, որ Ձեր երեխան այլ մարդկանց նկատմամբ հետաքրքրություն է դրսևորում: ☐ Ոչ ☐ Այո Եթե այո, ինչպե՞ս է նա արտահայտում Ձեր կամ այլոց նկատմամբ հետաքրքրությունը:	1 ա բ գ դ ե	ա) Փոխում է դիրքը (լարում է մարմինը, թուլանում): բ) Վերջույթներն է թափահարում (քացի է անում, թափահարում է թևերը): գ) Դիմախաղ (ժպիտ): դ) Ձայնարձակում: ե) Այլ վարքագիծ _____	**I. Մտադրություն չարտահայտող վարքագիծ** Ռեֆլեքսիվ կամ չկանխամտածված վարքագիծ, որը արտահայտում է վիճակ (քաղցը, տակը թաց լինելը): Վիճակը մեկնաբանվում/ընկալվում է խնամակալի կողմից:
2. Գրավում է ուշադրություն Ձեր երեխան անո՞ւմ է որոշակի արարքներ՝ Ձեր ուշադրությունը գրավելու նպատակով՝ երբեմն անգամ չունենալով ուշադրություն գրավելու մտադրություն: ☐ Ոչ ☐ Այո Եթե այո, ի՞նչ վարքագիծ/գծեր է դրսևորում Ձեր երեխան՝ ուշադրություն գրավելու նպատակով:	2 ա բ գ դ ե զ է ը	ա) Մոտենում է տվյալ անձին: բ) Շարժում է գլուխը: գ) Թափահարում է ձեռքերը: դ) Քացի է անում: ե) Ժպտում է, փոխում է դիմախաղը: զ) Ձայներ է արձակում: է) Նայում է դիմացինին: ը) Այլ վարքագիծ _____	**II. Մտադրություն արտահայտող վարքագիծ** Վարքագիծի մեջ արտացոլվում է մտադրություն, սակայն չի ծառայում հաղորդակցմանը: Վարքագիծը ուղղված է խնամակալին, ով ենթադրություն ունի մտադրության վերաբերյալ:
3. Հայցում է ուշադրություն Ձեր երեխան դրսևորո՞ւմ է ուշադրություն գրավելու մտադրություն: ☐ Ոչ ☐ Այո Եթե այո, ապա ինչպե՞ս է նա հայցում Ձեր ուշադրությունը: **4. Ցուցադրում է կապվածություն** Ձեր երեխան ցուցադրո՞ւմ է կապվածություն Ձեր կամ որևէ մեկի նկատմամբ կապվածություն: ☐ Ոչ ☐ Այո Եթե այո, ապա ինչպե՞ս է նա ցուցադրում կապվածությունը:	3 / 4 ա / ա բ / բ գ / գ դ / դ ե / ե զ / զ է / է	ա) Ձեռքերի/արմունկների շարժումներ: բ) Ձայնարձակումներ: գ) Դիմախաղ (ժպիտ): դ) Դիպչում է դիմացինին: ե) Նայում է դիմացինին: զ) Գործի է դնում կանչելու ֆունկցիա ունեցող մեխանիկական սարք: է) Ոչ ավանդական ժեստեր_____	**III. Ոչ ավանդական հաղորդակցում** Ոչ ավանդական ժեստեր, որոնք օգտագործվում են խնամակալի ուշադրությունը գրավելու մտադրությամբ:
5. Ողջունում է մարդկանց Երբ մեկին հանդիպում եք կամ մեկից բաժանվում եք Ձեր երեխան ողջունում կամ հրաժեշտ տալի՞ս է: ☐ Ոչ ☐ Այո Եթե այո, ապա ինչպե՞ս է նա ողջունում կամ հրաժեշտ տալիս: **6. Առաջարկում է, կիսվում:** Ձեր երեխան առաջարկո՞ւմ է որոշակի բաներ կամ կիսվո՞ւմ է ունեցածով՝ առանց ակնկալելու, որ հետ կվերադարձնեք: ☐ Ոչ ☐ Այո Եթե այո, ինչպե՞ս է նա առաջարկում Ձեզ որոշակի բաներ կամ որոշակի բաներով կիսվում Ձեր հետ: **7. Ուրիշների ուշադրությունը գրավում է** Ձեր երեխան Ձեր ուշադրությունը հրավիրո՞ւմ է իր ուշադրությունը գրված բաների վրա: ☐ Ոչ ☐ Այո Եթե այո, ինչպե՞ս է նա Ձեր ուշադրությունը հրավիրում իր ուշադրությունը գրված բաների վրա: **8. Քաղաքավարության սոցիալական ձևեր** Ձեր երեխան կիրառո՞ւմ է քաղաքավարության սոցիալական ձևեր, այնպես ինչպես՝ ինչ-որ բան անելու թույլտվություն խնդրել, շնորհակալություն հայտնել: ☐ Ոչ ☐ Այո Եթե այո, քաղաքավարության ինչպիսի՞ սոցիալական ձևեր է նա կիրառում:	5 / 6 / 7 / 8 ա / ա / ա / ա / ա / ա բ / բ / բ / բ / բ / բ գ / գ / գ / գ / գ / գ դ / դ / դ / դ / դ / դ ե / ե / ե / ե / ե / ե զ / զ / զ / զ / զ / զ է / է / է / է / է / է ը / ը / ը / ը / ը / ը թ / թ / թ / թ / թ / թ ժ / ժ / ժ / ժ / ժ / ժ	ա) Նայում է արևէ առարկայի, անձի, գործողության, ապա Ձեզ և այսպես մի քանի անգամ հայացքը հետ ու առաջ է անում: բ) Ձեզ որևէ բան է տալիս է, կամ ցույց տալիս: գ) Դիմացինին կանչելու նշան է անում: դ) Ողջույնի կամ հրաժեշտի նշան է անում: ե) Գլուխը տարուբերում, կամ առաջ-հետ է անում: զ) Գրկում, համբուրում, շոյում է դիմացինին: է) Ձեռք է բարձրացնում: ը) Որոշակի ինչերանգներով ձայներ է արձակում, օրինակ՝ հարցական: թ) Մատնացույց է անում ինչ-որ մեկին, կամ ինչ-որ առարկա: ժ) Ոչ ավանդական ժեստեր:	**IV. Սովորական/ընդունված հաղորդակցում** Ժեստերը կիրառվում են խնամակալի վարքի վրա ազդելու մտադրությամբ: Երեխան դրսևորում է «կրկնակի կողմնորոշում»:

	ա բ	ա բ	ա բ	ա բ	ա բ	ա բ	ա) Սոցիալական հասկացություններ լուսանկար կամ նկար, օրինակ՝ ձեռքով հրաժեշտ անող մեկի լուսանկար: բ) Սոցիալական հասկացությունների այլ կոնկրետ սիմվոլ _____	**V. Կոնկրետ սիմվոլներ** Որոշակի բաներ խորհրդանշող կոնկրետ սիմվոլների սահմանափակ կիրառություն և ցանկալի առարկային համապատասխանող սիմվոլի ճշգրիտ ընտրություն:
	ա բ գ դ ե զ	ա բ գ դ ե զ	ա բ գ դ ե զ	ա բ գ դ ե զ	ա բ գ դ ե զ	ա բ գ դ ե զ	ա) Բառերի արտասանություն (խնդրում եմ, տես, բարև): բ) Ժեստ (խնդրում եմ, տես, բարև): գ) Բառի գրություն (խնդրում եմ, տես, բարև): դ) Բրայլյան գրով գրություն (խնդրում եմ, տես, բարև): ե) Վերացական սիմվոլների կիրառություն(խնդրում եմ, տես, բարև): զ) Սիմվոլի տեսակը _____	**VI. Վերացական սիմվոլներ** Վերացական սիմվոլների սահմանափակ կիրառում առարկան նշելու համար: Սիմվոլները կիրառվում են մեկ առ մեկ:
	ա բ	ա բ	ա բ	ա բ	ա բ	ա բ	ա) Երկու սիմվոլի համադրություն (այն կողմում, արի մոտ, մամա հաջող): բ) Երեք սիմվոլի համադրություն (ուզում եմ խնձոր, սիրում եմ քեզ): Սիմվոլի տեսակը _____	**VII. Լեզու** Նշանային համակարգի կիրառում ըստ կանոնների: 2-3 սիմվոլների համադրություն ճիշտ շարադասությամբ:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՆԱԼՈՒ ՈՒՂԻՆԵՐԸ

Տվեք այս հարցերը		Պատասխանեք այստեղ			Հաղորդակցման վարքագիծ	Մակարդակ
						I. Մտադրություն չարտահայտող մակարդակ Մտադրություն չարտահայտող կամ ռեֆլեքսիվ վարքագիծը որը արտահայտում է վիճակ (քաղցը, տակը թաց լինելը): Վիճակը մեկնաբանվում/ ընկալվում է խնամակալի կողմից:
						II. Մտադրություն արտահայտող վարքագիծ Վարքագիծի մեջ արտացոլվում է մտադրություն, սակայն չի ծառայում հաղորդակցմանը: Վարքագիծը ուղղված է խնամակալին, ով ենթադրություն ունի մտադրության վերաբերյալ:
						III. Անսովոր հաղորդակցում Անսովոր ժեստերը օգտագործվում են խնամակալի վարքագծի վրա ազդելու մտադրությամբ:
1. Հարցերի այո/ոչ պատասխաններ Ի պատասխան իրեն ուղղված հարցերի Ձեր երեխան պատասխանում է այո, ոչ, չգիտեմ: ☐ **Ոչ** ☐ **Այո** Եթե այո, ապա ինչպես է նա պատասխանում: **2. Հարցեր տալ**	Ձեր երեխան հարցեր տալիս է (պարտադիր չէ, որ դա անի խոսքով), հստակ ձեզնից պատասխան ակնկալելով: ☐ **Ոչ** ☐ **Այո** Եթե այո, ապա ինչպես է նա հարց տալիս:	1 ա բ գ դ ե	2 ա բ գ դ ե	ա) Նայում է արևէ առարկայի, անձի, գործողության, ապա Ձեզ և այսպես մի քանի անգամ հայացքը հետ ու առաջ է անում: բ) Գլուխը տմբտմբացնում է, նկատի ունենալով «այո»: գ) Գլուխը տարբերում է ի նշան «ոչ»-ի: դ) Ուսերը թափահարում է: ե) Դիմախաղ:	**IV. Սովորական/ընդունված հաղորդակցում** Ժեստերը կիրառվում են խնամակալի վարքի վրա ազդելու մտադրությամբ: Երեխան ցույց է տալիս «կրկնակի կողմնորոշում»:
3. Առարկաներ/անձանց անվանել Ձեր երեխան անվանում է իրերը, անձանց: լինի դա ինքնաբուխ, թե» «Ինչ է սա հարցին» ի պատասխան: ☐ **Ոչ** ☐ **Այո** Եթե այո, ապա ինչպես է նա անվանում առարկաները/անձանց:	**4. Մեկնաբանել** Ձեր երեխան ինքնաբուխ (առանց Ձեր հարցնելու) մեկնաբանություններ անում է շրջապատի վերաբերյալ («ինչ սիրուն է», «շոգ է» և այլն). ☐ **Ոչ** ☐ **Այո** Եթե այո, ինչպես է Ձեր երեխան մեկնաբանություններ անում:	ա բ գ դ ե	ա բ գ դ ե	3 ա բ գ դ ե	4 ա բ գ դ ե	ա) Ճանաչում է լուսանկար/ նկար/ անձին/ վայրը/ գործողությունը/ այո-ն/ ոչ-ը: բ) Ճանաչում է առարկայի, անձի, վայրի, գործողության այո-ի, ոչ-ի սիմվոլ-նկարը: գ) Ժեստերով հասկացնում է առարկան կամ գործողությունը: դ) Ձայնարձակմամբ հասկացնում է առարկան կամ գործողությունը: ե) Այլ կոնկրետ նշանի կիրառում _____	**V. Որոշակի սիմվոլներ** Որոշակի սիվոլների սահմանափակ կիրառում կոնկրետ առարկաներ մատնանշելու համար: 1:1 ցանկալի առարկայի համապատասխան սիմվոլի ընտ

		ա բ գ դ ե զ	ա բ գ դ ե զ	ա բ գ դ ե զ	ա բ գ դ ե զ	ա) Բառեր է արտասանում («այո», «ոչ», առարկաների անուններ, առարկաների բնութագրեր): բ) Ժեստով արտահայտվում է («այո», «ոչ», առարկաների անուններ, առարկաների բնութագրեր): գ) Գրելով արտահայտվում է («այո», «ոչ», առարկաների անուններ, առարկաների բնութագրեր): դ) Բրայլյան գրով գրում է («այո», «ոչ», առարկաների անուններ, առարկաների բնութագրեր): ե) Սիմվոլների/նկարների համակարգով արտահայվում է («այո», «ոչ», առարկաների անուններ, առարկաների բնութագրեր): զ) Այլ տարբերակով է արտահայտվում _____	**VI. Վերացական սիմվոլներ** Վերացական սիմվոլների սահմանափակ կիրառում առարկան նշելու համար: Սիմվոլները կիրառվում են մեկ առ մեկ:
		ա բ	ա բ	ա բ	ա բ	ա) Համադրում է երկու սիմվոլ/նկար («ոչ, շնորհակալություն», «այն մեքենան», «արի մոտ», «ես չգիտեմ»): բ) Համադրում է երեք սիմվոլ/նկար («Գնում եմ տուն», «Այստեղ ցուրտ է», «Չեմ գա դպրոց»): Սիմվոլի տեսակը _____	**VII. Լեզու** Նշանային համակարգի կիրառում ըստ կանոնների: 2-3 սիմվոլների համադրություն ճիշտ շարադասությամբ:

ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՊՐՈՖԻԼԸ ԼՐԱՑՆԵԼԸ

Այս աղյուսակը Ձեզ կօգնի ամփոփել մատրիցայի 5-11-րդ էջերում հավաքագրած տեղեկատվությունը: Այն Ձեզ պատկերացում կտա երեխայի հաղորդակցման հմտությունների մակարդակի վերաբերյալ եւ կօգնի պլանավորելու հետագա անելիքը:
Օգտագործեք գունավոր մարկերներ՝ ընդգծելու համար երեխային համապատասխանող հաղորդակցական հմտությունները: Երեխայի մոտ այս կամ այն հմտության առկայությունը կարող եք փաստել, եթե այն իրականացվում է անկախորեն եւ պարբերաբար: Կարող եք օգտագործել գունավոր մարկերների մուգ եւ բաց երանգներ՝ գրանցելու համար նոր դրսեւորվող կարողությունն ու արդեն ամրապնդված հմտությունը:
Կարիք չկա օրինակ՝ առաջին, երկրորդ մակարդակներում նշումներ կատարել, եթե դրանք ամբողջությամբ առկա են ու երեխայի հաղորդակցումը համապատասխանում է հաջորդ մակարդակին:
Եթե հաղորդակցման մատրիցան կիրառում եք երկրորդ անգամ, կարող եք կիրառել այլ գույնի մարկեր: Այս մոտեցումը ակնհայտ կդարձնի երեխայի ձեռքբերումներն ու առաջընթացը: Միջամտությունից միառժամանակ հետո մատրիցան կրկին լրացվում է: Խորհուրդ է տրվում օգտագործել նույնը մատրիցան՝ կիրառելով այլ գույնի մարկեր՝ երեխայի առաջընթացն առավել ցայտուն տեսնելու համար:

Հաղորդակցման պրոֆիլի մեկնաբանումը

Հաղորդակցման պրոֆիլը ընդգրկում է բնականոն զարգացող երեխայի հաղորդակցման զարգացման առաջին երկու տարիները: Դիտելով նշված հատվածները դուք պատկերացում եք կազմում, թե հետազոտվողը ինչպե՞ս է զարգանում՝ բնականոն զարգացող երեխայի համեմատ, և, ինչն առավել կարևոր է, պրոֆիլը դուք պատկերացում եք կազմում, թե երեխայի որ կարողությունները զարգացնելու կարիք ունեք:

Հաղորդակցման պրոֆիլի արդյունքների կիրառումը միջամտության պլանավորման համար

Մատրիցան օգնում է սահմանել հաղորդակցման զարգացման կարճաժամկետ ու երկարաժամկետ նպատակները: Հետազոտվողի համար սահմանվում է միջամտության ունիվերսալ նպատակ (հաղորդակցման թիրախավորվող մակարդակի վերաբերյալ) և միջամտության յուրահատուկ նպատակներ (հաղորդակցման վարքագծի դրսևորման կամ մտադրության վերաբերյալ). Եթե երեխան տվյալ մակարդակում ունի հաղորդակցման վարքագծեր, որոնք դեռևս ձևավորված չեն, մասնագետը պետք է որոշում կայացնի, թե նպատակներ սահմանելիս շարունակի մնալ տվյալ մակարդակում՝ զարգացնելով բացակայող վարքագծերը, թե՞ անցնել այլ մակարդակի: Այս որոշումը բխում է հետազոտվողի շարժողական, զգայական, խոսքային առանձնահատկությունները: Կարող են լինել դեպքեր, երբ անհնար է ձևավորել տվյալ մակարդակի բոլոր վարքագծերը: Այս դեպքում հետազոտողը պլանավորում է անցում հաջորդ մակարդակին: Ձեր պլանավորումը կարող է ներառել նոր ասելիքներ (խոսքով կամ այլընտրանքային հաղորդակցման որևէ տարբերակով), որոնց կարիքը հետազոտվողն ունի:

Մակարդակ	Լուռ վարքագիծ	Միջամտության նպատակներ
I. Մտադրություն չարտահայտող վարքագիծ	Ռեֆլեքսիվ կամ չկանխամտածված վարքագիծ, որը արտահայտում է վիճակ (քաղցը, տակը թաց լինելը): Վիճակը մեկնաբանվում/ ընկալվում է խնամակալի կողմից:	Ձևավորել նպատակին ծառայող վարքագիծ՝ ստեղծելով երեխայից եկող ազդակների նկատմամբ զգայուն միջավայր:
II. Մտադրություն արտահայտող վարքագիծ	Վարքագծի մեջ արտացոլվում է մտադրություն, սակայն չի ծառայում հաղորդակցմանը: Վարքագիծը ուղղված է խնամակալին, ով ենթադրություն ունի մտադրության վերաբերյալ:	Արձագանքել հաղորդակցման մտադրությամբ վարքագծերին, որպեսզի երեխան պատկերացնի իր՝ հաղորդակցմանն ուղղված վարքագծերի նպատակը:
III. Ոչ սովորական հաղորդակցում	Ոչ սովորական ժեստերը օգտագործվում են խնամակալի վարքագծի վրա ազդելու մտադրությամբ:	Անսովոր ժեստերը հետզհետե փոխանինել ընդունված ժեստերով կամ անցնել նկար/ սիմվոլների կիրառմանը:
IV. Սովորական/ընդունված հաղորդակցում	Ժեստերը կիրառվում են խնամակալի վարքի վրա ազդելու մտադրությամբ: Երեխան դրսևորում է «կրկնակի կողմնորոշում»:	Սովորեցնել առարկաների և դրանք խորհրդանշող սիմվոլների (կոնկրետ և վերացական) համապատասխանությունը:
V. Կոնկրետ սիմվոլներ	Որոշակի բաներ խորհրդանշող կոնկրետ սիմվոլների սահմանափակ կիրառություն և ցանկալի առարկային համապատասխանող սիմվոլի ճշգրիտ ընտրություն:	Սովորեցնել առարկաների և դրանք խորհրդանշող վերացական սիմվոլների համապատասխանությունը:
VI. Վերացական սիմվոլներ	Վերացական սիմվոլների սահմանափակ կիրառում առարկան նշելու համար: Սիմվոլները կիրառվում են մեկ առ մեկ:	Սովորեցնել համադրել 2-3 սիմվոլ և կազմել արտահայտություն:
VII. Լեզու	Նշանային համակարգի կիրառում ըստ կանոնների: 2-3 սիմվոլների համադրություն ճիշտ շարադասությամբ:	Ընդլայնել ճիշտ շարահյուսությամբ արտահայտվելու ունակություններ:

ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՊՐՈՖԻԼ

Երեխայի անուն, ազգանունը, _____ Ամիս, ամսաթիվ _____ / _____ Մասնագետ _____

	ՄԵՐԺԵԼ	ՍՏԱՆԱԼ						ՍՈՑԻԱԼԱԿԱՆ						ԻՄՖՈՐՄԱՑԻԱ			
I մակարդակ՝ մտադրություն չարտահայտող վարքագիծ 0-3 ամսական	(1) Արտահայտում է անհարմար լինելը	(1) Արտահայտում է հարմարավետ լինելը						(1) Արտահայտում է հետաքրքրություն այլ մարդկանց նկատմամբ									
II մակարդակ՝ մտադրություն արտահայտող վարքագիծ 3-8 ամսական	(2) Բողոքում է	(2) Շարունակում է գործողությունը		(3) Կարողանում է ստանալ ավելին				(2) Գրավում է ուշադրություն									
III մակարդակ՝ ոչ սովորական հաղորդակցում 6-12 ամսական	(3) Ժխտում է, մերժում է	(4) Արտահայտում է գործողությունը կրկին կատարելու ցանկությունը	(5) Խնդրում է նոր գործողության կատարում	(6) Արտահայտում է տվյալ առարկայից ավելին ունենալու ցանկությունը	(7) Կատարում է ընտրություն	(8) Արտահայտում է նոր առարկա ունենալու ցանկությունը		(3) Հայցում է ուշադրություն	(4) Ցուցադրում է կապվածություն								
IV մակարդակ՝ սովորական/ ընդունված հաղորդակցում 12-18 ամսական	Ժխտում է, մերժում է	Արտահայտում է գործողությունը կրկին կատարելու ցանկությունը	Խնդրում է նոր գործողության կատարում	Արտահայտում է տվյալ առարկայից ավելին ունենալու ցանկությունը	Կատարում է ընտրություն	Արտահայտում է նոր առարկա ունենալու ցանկությունը		Հայցում է ուշադրություն	Ցուցադրում է կապվածություն	(5) Ողջունում է մարդկանց	(6) Առաջարկվում է, կիսվում է	(7) Կարողանում է ուրիշների ուշադրությունը տեղափոխել մի բանից մեկ այլ բանի վրա	(8) Քաղաքավարության սոցիալապես ընդունելի ձևեր է դրսևորում	(1) Պատասխանում է այո/ոչ	(2) Տալիս է հարցեր		
V մակարդակ՝ կոնկրետ սիմվոլներ 12-24 ամսական	Ժխտում է, մերժում է	Արտահայտում է գործողությունը կրկին կատարելու ցանկությունը	Խնդրում է նոր գործողության կատարում	Արտահայտում է տվյալ առարկայից ավելին ունենալու ցանկությունը	Կատարում է ընտրություն	Արտահայտում է նոր առարկա ունենալու ցանկությունը	(9) Խնդրում է առարկա, որը տեսադաշտում առկա չէ	Հայցում է ուշադրություն	Ցուցադրում է կապվածություն	Ողջունում է մարդկանց	Առաջարկվում է, կիսվում է	Կարողանում է ուրիշների ուշադրությունը տեղափոխել մի բանից մեկ այլ բանի վրա	Քաղաքավարության սոցիալապես ընդունելի ձևեր է դրսևորում	Պատասխանում է այո/ոչ	Տալիս է հարցեր	(3) Անվանում է առարկաները/ մարդկանց	(4) Մեկնաբանում է
VI մակարդակ՝ վերացական սիմվոլներ 18-24 ամսական	Ժխտում է, մերժում է	Արտահայտում է գործողությունը կրկին կատարելու ցանկությունը	Խնդրում է նոր գործողության կատարում	Արտահայտում է տվյալ առարկայից ավելին ունենալու ցանկությունը	Կատարում է ընտրություն	Արտահայտում է նոր առարկա ունենալու ցանկությունը	Խնդրում է առարկա, որը տեսադաշտում առկա չէ	Հայցում է ուշադրություն	Ցուցադրում է կապվածություն	Ողջունում է մարդկանց	Առաջարկվում է, կիսվում է	Կարողանում է ուրիշների ուշադրությունը տեղափոխել մի բանից մեկ այլ բանի վրա	Քաղաքավարության սոցիալապես ընդունելի ձևեր է դրսևորում	Պատասխանում է այո/ոչ	Տալիս է հարցեր	Անվանում է առարկաները/ մարդկանց	Մեկնաբանում է
VII մակարդակ՝ լեզու 24 ամսականից բարձր	Ժխտում է, մերժում է	Արտահայտում է գործողությունը կրկին կատարելու ցանկությունը	Խնդրում է նոր գործողության կատարում	Արտահայտում է տվյալ առարկայից ավելին ունենալու ցանկությունը	Կատարում է ընտրություն	Արտահայտում է նոր առարկա ունենալու ցանկությունը	Խնդրում է առարկա, որը տեսադաշտում առկա չէ	Հայցում է ուշադրություն	Ցուցադրում է կապվածություն	Ողջունում է մարդկանց	Առաջարկվում է, կիսվում է	Կարողանում է ուրիշների ուշադրությունը տեղափոխել մի բանից մեկ այլ բանի վրա	Քաղաքավարության սոցիալապես ընդունելի ձևեր է դրսևորում	Պատասխանում է այո/ոչ	Տալիս է հարցեր	Անվանում է առարկաները/ մարդկանց	Մեկնաբանում է

Սիմվոլների տեսակը
V, VI կամ VII մակարդակի դեպքում մատնանշեք տեսակները կամ կիրառվող սիմվոլները (օրինակ՝ նկար, եռաչափ սիմվոլ, մատնախոսություն, խոսք)
_____
_____

ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Նտադրություն չարտահայտող վարքագիծ
Դրսևորում է լավ զգալը (I մակարդակ), կամ ունի հաղորդակցվելու գործառույթ (II մակարդակ)

Նախասիմվոլային հաղորդակցում
Ներառում է շարժումներով կամ ձայնարձակումներով հաղորդակցումը (I-IV մակարդակ)

Մտադրություն արտահայտող վարքագիծ
Դրսևորում է հաղորդակցման մտադրություն (III-VII մակարդակ)

Սիմվոլիկ հաղորդակցում
Ներառում է հաղորդակցումը սիմվոլների միջոցով (V-VII մակարդակ)